ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Կոտայքի մարզ գ.Արամուս, Հեռ. (0222) 6-01-57,
(0222) 6-44-10

N 240

16 դեկտեմբեր 2016թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ. ԳՈՒԼՅԱՆԻՆ

**Հարգարժան պարոն Գուլյան.**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջների՝ Ձեզ ենք ներկայացնում Արամուս համայնքի ավագանու դեկտեմբերի 9-ի արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 45 թերթ:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ*

*Կատարող՝ Սամվել Նիկողոսյան 0222-6-44-10*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**09 դեկտեմբեր 2016 թվականի N 83**

### *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 17 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 17 արտահերթ նիստի օրակարգը.

1. Արամուս համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին.
2. Արամուս համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 11-ի N 40 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին.
3. Կոտայքի մարզպետարանի կողմից 2016 թվականին համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրության խախտումների և թերությունների վերացման միջոցառումների մասին.
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս աճուրդային կարգով օտարելու մասին.
5. Արամուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 80-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Կողմ -9** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ
4. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
5. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
7. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբեր 2016 թվականի N 84-Ն

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 53-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Արամուս համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ
4. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
5. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
7. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ

# **2017-2021** ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Մշակվել է՝** համայնքի ղեկավարին կից գործող «Արամուս համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» կողմից
**Ներկայացվել է՝** համայնքի ղեկավար Հրայր Նիկողոսյանի կողմից
**Հաստատվել է՝** համայնքի ավագանու **09.12.2016թ.** թիվ **84-Ն** որոշմամբ

ԱՐԱՄՈՒՍ **2016թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**1.** ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ……………………………………………..……….

**2.**ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.........................................................

**3.** ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ................

**4.** ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ…………………………………………………………………...

**5.** ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ……………………………………………………………………………

**6.** ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.........................................................................................................

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Արամուս համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Արամուս համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Արամուս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 82 որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող «Արամուս համայնքի ղեկավարին կից զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառված են Արամուս համայնքի համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶԾ-ն ներառում է նաև Արամուս համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Արամուս համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Արամուսի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

# 2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## *2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

Արամուս բնակավայրը կազմավորվել է դեռևս հնագույն ժամանակներից: Համայնքի անվանումը կապել են Արա Գեղեցիկի անվան հետ և տարբեր ժամանակնմերում նաղբյուրներում այն հիշատակվել է տարբեր անուններով` Արամոնք, Արամոնս,Արախուս և այլն:

Համայնքի բնակչության մի մասը բնիկներ են, իսկ մյուս մասը 1829-1830 թվականներին գաղթել են Պարսկահայաստանի Խոյ գավառի Կըռս և Շաբանլու գյուղերից:

Արամուսը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, այստեղ են գտնվում Սուրբ Հակոբ, Մարիամ Աստվածածին, Սուրբ Նշան (Ծիրանավոր 7-րդ դար)եկեղեցիները, ինչպես նաև Արամուս ամրոցը, որը ըստ հնագետների հետազոտությունների Կիկլոպյան շրջանին է պատկանում:

Համայնքը գտնվում է Հատիս լեռան ստորոտում, որտեղից , մի կողմից երևում է Բիբլիական Արարատը, իսկ մյուս կողմից Արագածի ձյունափառ գագաթները:

Արամուսը գտնվում է մարզկենտրոն Հրազդանից 42կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաք Երևանից 21կմ, այն ծովի մակերևույթից բարձր է 1450մ-ով, ընդհանուր մակերեսը 23,61կմ$^2$ է:

Սահմանակից է արևմուտքից` Մայակովսկի, հյուսիսից` Զորաղբյուր, հյուսիս-արևելքից` Զովք և Կամարիս, արևելքից` Կաթնաղբյուր, հարավ-արևելքից ` Ակունք, հարավից` Նոր Գյուղ համայնքներին:

Արամուս համայնքի վարչական տարածքը կազմում է 1499,11 հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1075,85 հա-ը, բնակավայրերը զբաղեցնում են 238,15 հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները` 101,37 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները` 16,67 հա, հատուկ պահպանվող տարածքները` 53,50 հա, ջրային հողերը` 13,57 հա, պետական սեփականություն հանդիսացող հողերը` 78 հա:

Արամուս համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 3879 մարդ (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Մարդ |
|---|---|---|
| 1. | Բնակչության թվաքանակը, մարդ | **3879** |
| 2. | Տնային տնտեսությունների թվաքանակը | **850** |
| 2.1 | այդ թվում` ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող | **5** |
| 2.2 | կիսակառույց տներում բնակվող | **70** |
| 3. | Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը | **62** |

Համայնքի բնակչության 52% կազմում են տղամարդիկ և 48% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ **2.** Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները **(01.01.2016** թ. դրությամբ)

| Հ/Հ | Ցուցանիշները | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝ | **3879** | **1859** | **2020** |
| | մինչև 1 տարեկան | **49** | **24** | **25** |
| | 1-2 տարեկան | **106** | **49** | **57** |
| | 3-4 տարեկան | **124** | **63** | **61** |
| | 5-6 տարեկան | **104** | **49** | **55** |
| | 7-10 տարեկան | **209** | **30** | **119** |
| | 11-14 տարեկան | **187** | **71** | **116** |
| | 15-17 տարեկան | **115** | **49** | **66** |
| | 18 և ավելի տարեկան | **2987** | **1464** | **1523** |
| 2. | Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝ | **306** | **127** | **179** |
| | Տարիքային և աշխատանքային | **355** | **135** | **220** |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | **17** | **11** | **6** |
| 4. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | **0** | **0** | **0** |
| 5. | Հաշմանդամ երեխաներ | **14** | **7** | **7** |
| 6. | Խնամակալության հանձնված երեխաներ | **0** | **0** | **0** |
| 7. | Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ | **1** | **0** | **1** |
| 8. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | **80** | **80** | **0** |
| 9. | Հաշմանդամներ | **35** | | |
| 10. | Զբաղվածներ | **3** | | **3** |
| 11. | Գործազուրկներ | **1550** | **849** | **701** |
| 12. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | **62** | | |
| 13. | Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը | **3** | | |

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

## *2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ*

Արամուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 80-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **82799,5** հազար դրամ, ծախսերի գծով՝ **89799,5** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **7000,0** հազար դրամ: Արամուս համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 11-ի թիվ 3-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) ծախսերի գծով՝ **89233,9** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **6434,4** հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **19,7%**՝ **16300,0** հազար դրամ:

Գյուղում գործում են ալկոհոլային խմիչքների, սնկերի, սննդամթերքի, քարի մշակման, հանքարդյունահանման և արտադրական կազմակերպություններ: Անհատ ձեռնարկատերերի կողմից կազմակերպվում են հացի և թարմ այլուրե հրուշակեղենի, մետաղապլաստե դռների ու լուսամուտների և այլ արտադրություններ: Արտադրված արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է:

Համայնքում զարգանում են առևտրի և սպասարկման փոքր և միջին կայուն ձևերը: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունը, անասնապահությունը, արտադրությունը, մատուցվող ծառայություններն ու առևտուրն է:

Ակտիվ ձեռնարկություններն են՝

- ✓ «Գլանժ Ալկո» ՍՊԸ՝ իրականացնում է ալկոհոլային խմիչքների թորում, բազմաթորում և խառնում
- ✓ «Ա. Ա. Բ. Պրոեկտ» ՍՊԸ՝ իրականացնում է քարի հանքարդյունահանում և մշակում,
- ✓ «Արամուսի ջերմատնային կոմբինատ» ԲԲԸ՝ իրականացնում է քարի մշակում,
- ✓ «Դեմեր» ՍՊԸ՝ իրականացնում է քարի հանքարդյունահանում և մշակում,
- ✓ «ՄԱՂ շինանյութ» ՍՊԸ՝ իրականացնում է քարի մշակում և շինարարական աշխատանքների իրականացում,
- ✓ «ԼԱՄՕ» ՍՊԸ՝ իրականացնում է քարի հանքարդյունահանում և մշակում,
- ✓ «ՆԱՌ ՇԻՆ» ՍՊԸ՝ իրականացնում է քարի հանքարդյունահանում,
- ✓ «ՆԻԿ ՎԻՆ» ՍՊԸ՝ իրականացնում է առևտրի և ծառայությունների մատուցում,
- ✓ «ՍԱԴԱՎ» ՍՊԸ՝ իրականացնում է գյուղ. մթերքների վերամշակում,
- ✓ «Նիկոլայ Ինթերնեյշնլ Արմենիա» ՍՊԸ՝ իրականացնում է զեյթունի արտադրություն,
- ✓ «Բայազետ» ՍՊԸ՝ իրականացնում է մսամթերքների արտադրություն,
- ✓ «Արամուսի բարիքներ» ՍՊԸ՝ իրականացնում է ջերմոցային տնտեսություն,
- ✓ «Գետափ» ՍՊԸ՝ իրականացնում է առևտրի և ծառայությունների մատուցում,

Համայնքի զարգացման համար անհրաժեշտ են մեծ կապիտալ ներդրումներ արդյունաբերության տարբեր ճյուղերում:

Արամուս համայնքում առկա են պատմամշակութային հուշարձաններ՝ Սբ. Նշան (VI-VII դարեր), Սբ. Հակոբ և Մարիամ Աստվածածին եկեղեցիները:

Համայնքում գործում են միջնակարգ կրթության մեկ հաստատություն՝

- ✓ «Արամուսի Վլ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ,

Դպրոցն ունի 2 մասնաշենք, որոնցից մեկը հիմնանորոգված է, իսկ մյուսը հիմնանառոգման կարիք ունի: Դպրոցը ապահովված է ջեռուցման համակարգով:

Համայնքում գործում է նախադպրոցական կրթության հաստատություն՝

- ✓ Արամուսի Վլ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցի նախակրթարան:

Նախակրթարանը գործում է ավագ դպրոցի տարածքում:

Համայնքում գործում է արտադպրոցական կրթության մեկ հաստատություն՝

- ✓ «Արամուսի մարզամշակույթային կենտրոն»,

Արամուսի մարզամշակույթային կենտրոնի շենքը գտնվում է վատթար վիճակում: Կենտրոնի շենքը ապահովված է ջեռուցման համակարգով: Ջեռուցումը կատարվում է կենտրոնացված ջեռուցման միջոցով: Արամուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 83 որոշմամբ՝ երաժշտական դպրոցում 2016 թվականի համար ուսման վճարի չափը յուրաքանչյուր ամսվա համար սահմանվել է 1000 (մեկ հազար) դրամ՝ բոլոր մասնագիտությունների գծով:

Աղյուսակ 3-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

**Աղյուսակ 3. Արամուս համայնքի հանրակրթական դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների, վերաբերյալ ցուցանիշներ**

| Հ/հ | Հաստատության անվանումը | Աշխատողների թիվը | Սովորողների թիվը |
|---|---|---|---|
| 1. | «Արամուսի Վլ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | **47** | **475** |
| 2. | Արամուսի Վլ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցի նախակրթարան | **2** | **41** |
| 3. | Արամուսի մարզամշակույթային կենտրոն | **15** | **73** |

Արամուս համայնքում գործում է առողջության պահպանության մեկ կազմակերպություն՝ «Արամուսի ԱԱՊԿ» ՊՈԱԿ:

Արամուսի ԱԱՊԿ-ի շենքը գտնվում է բարվոք վիճակում, ապահովված է ջեռուցման համակարգով, սակայն ունի արդիական բժշկական սարքերով համալրման կարիք: Արամուսի ԱԱՊԿ-ի կողմից բնակչությանը մատուցվում է անվճար բժշկական ծառայություններ:

## *2.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ*

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին:

Պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների, կանխատեսվող ֆոնդային մուտքերից և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

**Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը**

հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2015թ. փաստ. | 2016թ. փաստացի 01.10.2016 | 2017թ. կանխ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ **(I+II+III)*** | **106300,1** | **69145,1** | **108925,1** | **112645,1** | **116124,9** | **118735,4** | **121286,8** |
| **I.** | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ **(1+2+3)*** | **83499,2** | **60102,3** | **85925,1** | **88445,1** | **91124,9** | **93385,4** | **95786,8** |
| **1** | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | **18867,6** | **10243,3** | **17400** | **17747,5** | **18118,8** | **18343,2** | **18670,9** |
| **1.1** | **Գույքային հարկեր անշարժ գույքից** | **8101,5** | **4059,4** | **8900** | **9010** | **9095** | **9145** | **9210** |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | **1300,0** | **454,8** | **2200** | **2300** | **2370** | **2400** | **2450** |
| | Հողի հարկ | **6801,5** | **3604,6** | **6700** | **6710** | **6725** | **6745** | **6760** |
| **1.2** | **Գույքային հարկեր այլ գույքից** | **9841,1** | **5661,3** | **7650** | **7879** | **8155** | **8318,1** | **8567,6** |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | **9841,1** | **5661,3** | **7650** | **7879** | **8155** | **8318,1** | **8567,6** |
| **1.3** | **Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | **925,0** | **522,5** | **850** | **858,5** | **868,8** | **880,1** | **893,3** |
| | Տեղական տուրքեր | **925,0** | **522,5** | **850** | **858,5** | **868,8** | **880,1** | **893,3** |
| **1.4** | **Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ** | | | | | | | |
| | Պետական տուրքեր | | | | | | | |
| **1.5** | **Այլ հարկային եկամուտներ** | | | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | | | |
| **2** | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | **57880,9** | **45299,6** | **62425,1** | **64297,9** | **66291,1** | **68147,2** | **69850,9** |
| **2.1** | **Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| **2.2** | **Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| **2.3** | **Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | **57880,9** | **45299,6** | **62425,1** | **64297,9** | **66291,1** | **68147,2** | **69850,9** |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | **57880,9** | **45299,6** | **62425,1** | **64297,9** | **66291,1** | **68147,2** | **69850,9** |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | | | | | | | |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | | |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| **2.4** | **Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | | |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| **3** | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | **6750,8** | **4559,5** | **6100** | **6400** | **6715** | **6895** | **7265** |
| **3.1** | **Տոկոսներ** | | | | | | | |
| **3.2** | **Շահաբաժիններ** | | | | | | | |
| **3.3** | **Գույքի վարձակալությունից եկամուտներ** | **3090,6** | **1828,1** | **2900** | **2900** | **2980** | **3000** | **3100** |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | **3090,6** | **1828,1** | **2900** | **2900** | **2980** | **3000** | **3100** |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | | | | | | |
| **3.4** | **Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից**, այդ թվում | | | | | | | |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | | | | | | |
| **3.5** | **Վարչական գանձումներ** | **3469,2** | **2299,0** | **3200** | **3500** | **3735** | **3895** | **4165** |
| | Տեղական վճարներ | **2332,5** | **977,4** | **2400** | **2500** | **2550** | **2610** | **2700** |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | **344,1** | **851,6** | **-** | **180** | **350** | **400** | **550** |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | **792,6** | **470** | **800** | **820** | **835** | **885** | **915** |
| **3.6** | **Մուտքեր տույժերից, տուգանքներից** | **-** | **300** | **-** | **-** | **-** | **-** | **-** |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | **-** | **300** | **-** | **-** | **-** | **-** | **-** |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | | | | |
| **3.7** | **Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| **3.8** | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| **3.9** | **Այլ եկամուտներ*** | **191,0** | **132,4** | **-** | **-** | **-** | **-** | **-** |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | **-** | **4200** | **3000** | **3500** | **3700** | **3900** | **4000** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 191,0 | 132,4 | - | - | - | - | - |
| II. | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4) | 8212,4 | 5308,7 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 1 | **Հիմնական միջոցների իրացումից մուտքեր** | - | 3960,0 | - | - | - | - | - |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | - | 3960,0 | - | - | - | - | - |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | | | |
| 2 | **Պաշարների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| 3 | **Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| 4 | **Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր** | 8212,4 | 1348,7 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| | Հողի իրացումից մուտքեր | 8212,4 | 1348,7 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| III. | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | | | | | | | |
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | | | | | | | |
| 1 | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.3 | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |
| 2 | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | |
| 2.1 | **Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն** | | | | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում | | | | | | | |
| **2.2** | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | | | | |
| **2.3** | **Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը** | **14588,5** | **3734,1** | **3000** | **4200** | **5000** | **5350** | **5500** |
| **2.4** | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս** | | | | | | | |
| **2.5** | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս** | | | | | | | |
| **2.6** | **Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում** | | | | | | | |
| | **որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը** | | | | | | | |
| Բ. | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | | | | |
| **1** | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | |
| **1.1** | Արժեթղթեր | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| **1.2** | Վարկեր | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| **1.3** | Փոխատվություններ | | | | | | | |
| | -փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |

***)** Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Աղյուսակ **4.** Համայնքի 2017-**2021**թթ. բյուջեն

**( եկամտների և ծախսերի կանխատեսումը)**

| Եկամտի և ծախսի տեսակը | 2015թ. տարեկան կանխ | 2017թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % | 2018թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % | 2019թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % | 2020թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % | 2021թ. կանխ. | 2015թ փաստ.նկատ % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | 79157,8 | 85925,1 | 108,5 | 88445,1 | 11,7 | 91124,9 | 115,1 | 93385,4 | 118 | 95786,8 | 121 |
| Հարկային եկամուտներ, որից | 15210,0 | 17400 | 114,4 | 17747,5 | 116,7 | 18118,5 | 119,1 | 18343,2 | 120,6 | 18670,9 | 122,8 |
| Հողի հարկ | 6700 | 6700 | 100 | 6710 | 100,1 | 6725 | 100,4 | 6745 | 100,7 | 6760 | 100,9 |
| Գույքահարկ | 7700 | 9850 | 127,9 | 10179 | 132,0 | 10525 | 136,7 | 10718,1 | 139,2 | 11017,6 | 143,1 |
| Տեղական տուրքեր | 810 | 850 | 104,9 | 858,5 | 106 | 868,8 | 107,2 | 880,1 | 108,7 | 893,3 | 110,3 |
| Պաշտոնական ընթացիկ դրամաշն. | 57547,8 | 62425,1 | 108,5 | 64297,9 | 11,7 | 66291,1 | 115,2 | 68147,2 | 118,4 | 69850,9 | 121,4 |
| Այլ եկամուտներ | 6400 | 6100 | 95,3 | 6400 | 100 | 6715 | 104,9 | 6895 | 107,7 | 7265 | 113,5 |
| Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | 11000 | 20000 | 181,8 | 20000 | 181,8 | 20000 | 181,8 | 20000 | 181,8 | 20000 | 181,8 |
| Տարեսկզբի ազատ մնացորդ | 14588,5 | 3000 | 20,6 | 4200 | 28,8 | 5000 | 34,3 | 5350 | 36,7 | 5500 | 37,7 |
| **Ընդամենը** | 99465.7 | 98519.0 | 99.0 | 99894.0 | 100.4 | 99095 | 99.6 | 103750 | 104.3 | 105650 | 106.2 |
| **Ընդամենը ծախսեր** | | | | | | | | | | | |
| Ընթացիկ ծախսեր, այդ թվում | 78480.8 | 83219.0 | 106.0 | 83444 | 106.3 | 84095 | 107.2 | 86250 | 109.9 | 87650 | 111.7 |
| Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ | 49430.0 | 53014 | 107.2 | 53114 | 107.4 | 53175 | 107.6 | 54250 | 109.6 | 54700 | 110.7 |
| Ապրանքն. զնման և ծառ. վճ. ծախս | 17762.2 | 17825.0 | 100.4 | 17930 | 100.9 | 18000 | 101.1 | 18530 | 104.3 | 18900 | 106.4 |
| Սուբսիդիաներ | 175.0 | 280.0 | 160.0 | 300.0 | 171.0 | 310.0 | 177.1 | 350.0 | 200.0 | 400.0 | 228.6 |
| Դրամա-շնորհներ | | | | | | | | | | | |
| Սոցիալական նպաստներ | 11030.6 | 12000 | 108.8 | 12000 | 108.8 | 12500 | 113.3 | 13000 | 117.8 | 13500 | 122.4 |
| Այլ ծախսեր | 83.0 | 100.0 | 120.5 | 100.0 | 120.5 | 110.0 | 132.5 | 120.0 | 144.6 | 150.0 | 180.7 |
| Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում | 20984.9 | 15300.0 | 72.9 | 16450.0 | 78.4 | 5000 | 71.5 | 17500 | 83.4 | 18000.0 | 85.8 |
| Հիմնական միջոցներ | | | | | | | | | | | |

## *2.4. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
2. Համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը,
3. Համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող ոչ բնակելի տարածքների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը,
4. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստում, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծումը,
5. Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով,

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

## *2.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ,
- ✓ Համայնքի մայրաքաղաքին մոտ գտնվելը,
- ✓ Երևան-Արամուս ճանապարհի լավ վիճակը,
- ✓ Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Ոռոգման ջրի ներհամայնքային համակարգերի վատ վիճակը,
- ✓ Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի մեկնողների քանակը,
- ✓ Աշխատատեղերի պակասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Մեծ քանակի և որակի աշխատուժի առկայությունը,
- ✓ Արտադրական տարածքների առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Գործազրկության մակարդակի աճը,

## 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

### *3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ*

Արամուսի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը, համայնքը դարձնել մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

| Հ/Հ | Ցուցանիշները | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | **1,6%** | **1,4%** | **1,3%** | **1,2%** | **1%** |
| 2. | Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով | **14,4%** | **16,7%** | **19,1%** | **20,6%** | **22,8%** |
| 3. | Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | **1%** | **1.5%** | **1.7%** | **2%** | **2.5%** |

### *3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- ✓ Համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգումը և մշակութային կյանքի աշխուժացումը,
- ✓ Համայնքի փողոցների բարեկարգումը,
- ✓ Համայնքի փոցոցների ասֆալտապատումը,
- ✓ Ոռոգման ցանցի հիմնանորոգումն ու վերակառուցումը,
- ✓ էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի ծրագրերի իրագործումը,
- ✓ Համայնքում մանկապարտեզի կառուցումը,

Աղյուսակ 6. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների և հիմնական նպատակների կանխատեսվող արժեքներ (2017-2021թ.թ.)

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|
| ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | | | |
| **1.**Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | **1,6%** | **1,4%** | **1,3%** | **1,2%** | **1%** |
| **2.**Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով | **14,4%** | **16,7%** | **19,1%** | **20,6%** | **22,8%** |
| **3.**Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով | | | | | |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ | | | | | |
| **1.**Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ | | | | | |
| 1.1.Համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգումը և մշակութային կյանքի աշխուժացում | | | | | |
| **2.** Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը | | | | | |
| 2.2. Համայնքի փողոցների ասֆալտապատում | | | | | |
| 2.4. Ոռոգման ցանցի հիմնանորոգումն ու վերակառուցում | | | | | |
| **3.**Համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը | | | | | |
| **4.** Համայնքում մանկապարտեզի կառուցում | | | | | |

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում:

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐN1

«Համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգումը և մշակութային կյանքի աշխուժացում »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգման համար</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝<br>ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="10">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7"></td></tr>
<tr><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում<br>2. Համայնքի ներդրում<br>3. Պայմանագրի կնքում<br>4. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 0.0<br>Կապիտալ ծախսեր՝ 100000.0<br>Ընդհանուր բյուջեն՝ 100000.0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Տարերային աղետներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի մշակույթի տունը կարիք ունի վերանորոգվելու: Այստեղ գործում են ժողովրդական պարերի խմբակներ, անցկացվում են զանազան մշակութային միջոցառումներ: Անհրաժեշտ է վերանորոգել հատկապես շենքի տանիքը, քանի որ առաջացած կաթոցների հետևանքով քայքայվում է ամբողջ շենքը:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N2

« Համայնքի ճանապարհների ասֆալտապատում և վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Իրականացնել ճանապարհների ասֆալտապատում և վերանորոգում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝<br>ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում<br>2. Համայնքի ներդրում<br>3. Պայմանագրի կնքում<br>4. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝ 80000.0<br>Ընդհանուր բյուջեն՝ 80000.0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի փողոցների մի մասը գրունտային են, անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար կատարել փոսալցումներ, իսկ փողոցներից 15 կմ ասվալտապատել:</td></tr>
</table>

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N3

« Համայնքի ոռոգման ցանցի հիմնանորոգումն ու վերակառուցում »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ոռոգման ցանցի հիմնանորոգումն ու վերակառուցում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝<br>ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում<br>2. Համայնքի ներդրում<br>3. Պայմանագրի կնքում<br>4. Աշխատանքների կատարում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 0.0<br>Կապիտալ ծախսեր՝ 50000.0<br>Ընդհանուր բյուջեն՝ 50000.0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Տարերային աղետները</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի երբեմնի խնձորենու այգիները ոռոգման ջրի բացակայության հետևանքով վերածվել են ջրովի վարելահողերի, որտեղ հիմնականում մշակվում է հացահատիկ: Վերջին տարիներին համայնքում կառուցված ոռոգման փակ խողովակաշարից նախատեսվում է ոռոգման ջուրը հասցնել այդ վարելահողերին, որը հնարավորություն կտա հիմնել նոր այգիներ, ինչպես նաև կբարելավվի Անկախության թաղամասի ոռոգման ցանցը:</td></tr>
</table>

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N4

« Համայնքում մանկապարտեզի կառուցում »
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքում մանկապարտեզի կառուցում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝<br>**ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ**</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. *Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում*<br>2. *Համայնքի ներդրում*<br>3. *Պայմանագրի կնքում*<br>4. *Աշխատանքների կատարում*</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 0.0<br>Կապիտալ ծախսեր՝ 300000.0<br>Ընդհանուր բյուջեն՝ 300000.0</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Տարերային աղետներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համանքում մինչև 6 տարեկան երեխաների քանակը վերջին տարիներին 350-ից ավել է լինում, ինչի պատճառով խիստ կարիք է առաջանում համայնքում մանկապարտեզ ունենալը:</td></tr>
</table>

# 4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Արամուս համայնքի ՀԶԾ-ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 7-ում:

**Աղյուսակ 7. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**(Արամուս համայնք)**

**(2017-2021 թթ.)**

| Պարտադիր խնդիր | Բյուջետա-վորված միջոցներ (մլն. դրամ) | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | | Ֆինանսավորման աղբյուրներ | | | | | | Ծախսերի դասեր | | Ֆինանսավորման կարգավիճակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | Համայնքի սեփական եկամուտներ | Ներքին պաշտոնական դրամաշնորհներ | Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | Բարեգործություն/նվիրատվություն | Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցու-թյուն | Այլ աղբյուրներ | Ընթացիկ ծախսեր | Կապիտալ ծախսեր | Ֆինանսավորումն առկա է | Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ | Ներկայացվել է ֆինանսավորման հայտ | Ֆինանսավորման հարցը լուծված չէ |
| 1.Համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգումը և մշակութային կյանքի աշխուժացում | 100.0 | 5.0 | 15.0 | 15.0 | 25.0 | 40.0 | 20.0 | | | | 80.0 | | | 100.0 | | | | 80.0 |
| 2.Համայնքի փողոցների բարեկարգում | 80.0 | 5.0 | 6.0 | 6.0 | 10.0 | 53.0 | 37.0 | | | | 43.0 | | | 80.0 | | | | 43.0 |
| 4. Ոռոգման ցանցի հիմնանորոգումն ու վերակառուցում | 50.0 | | | | 25.0 | 25.0 | 0.0 | | | | 50.0 | | | 50.0 | | | | 50.0 |
| 7. Համայնքի մանկապարտեզի կառուցում | 300.0 | 5.0 | 5.0 | 10.0 | | 280.0 | 20.0 | | | | 280.0 | | | 300.0 | | | | 280.0 |

## 5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

**Աղյուսակ 8-*ում*** ներկայացված է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

**Աղյուսակ 8.** **Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔ**

**( _____________ թվականներ)**

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | Ցուցանիշի փաստացի արժեք (2016) | Ցուցանիշի թիրախային արժեք (2017) | Ցուցանիշի փաստացի արժեք (2017) | Ցուցանիշի կատարողական (2017) | Ցուցանիշի թիրախային արժեք (2018) | Ցուցանիշի փաստացի արժեք (2018) | Ցուցանիշի կատարողական (2018) | Ցուցանիշի թիրախային արժեք (2019) | Ցուցանիշի փաստացի արժեք (2019) | Ցուցանիշի կատարողական (2019) | Ցուցանիշի թիրախային արժեք (2020) | Ցուցանիշի փաստացի արժեք (2020) | Ցուցանիշի կատարողական (2020) | Ցուցանիշի թիրախային արժեք (2021) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) | Ցուցանիշի կատարողական (2021) | Տվյալների հավաքագրման պարբերականությունը | | Ցուցանիշի տվյալների աղբյուր | Ցուցանիշի տվյալների մեթոդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | Կիսամյակային | Տարեկան | | |
| ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)** | | | | | | | | | | | | | | | | | | X | Մարզպետա-րաններ (Երևան, Գյումրի, Վանաձոր, Արարատ, Ջերմուկ համայնքների համար՝ համայնքապետարաններ) | Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց |
| **2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով** | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |
| **3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով** | | | | | | | | | | | | | | | | | | X | ՀՀ Ոստիկանութ-յուն | Հարցում |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **1.Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ** | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1.1.Համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգումը և մշակութային կյանքի աշխուժացում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա- պետարան | Փաստա- թղթային ուսումնա- սիրություն |
| **2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը** | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2.2. Համայնքի փողոցների բարեկարգում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա- պետարան | Փաստա- թղթային ուսումնա- սիրություն |
| 2.3. Բակային տարածքների բարեկարգումն ու ասֆալտապատում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա- պետարան | Փաստա- թղթային ուսումնա- սիրություն |
| 2.4. Ոռոգման ցանցի հիմնանորոգումն ու վերակառուցում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա- պետարան | Փաստա- թղթային ուսումնա- սիրություն |
| 2.5.Համայնքի հանգստի գոտու վերականգնում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա- պետարան | Փաստա- թղթային ուսումնա- սիրություն |
| **3.Համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը** | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.6. Բազմաբնակարան շենքերի տանիքների կապիտալ վերանորոգում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |
| **4.Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստում, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծումը** | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4.7. Համայնքի մարզադպրոցի կառուցում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |
| **5.Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով** | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 5.8. Եկեղեցու կառուցման աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |
| 5.9.Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի ծրագրերի իրագործում | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |

# ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինասնական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և  ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 դեկտեմբեր 2016 թվականի N 85

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 40 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և 72-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

**1.**Ուժը կորցրած ճանաչել Արամուս համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 11-ի «Կոտայքի մարզի Արամուս համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N 40 որոշումը.

**2.** Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կողմ -9** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ

4. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

5.ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

7.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

8.ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ

9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**09 դեկտեմբեր 2016 թվականի N 86**

***ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով և քննարկելով Կոտայքի մարզպետարանի աշխատակիցների կողմից Արամուս համայնքում 2016 թվականի նոյեմբերի 7-ից 10-ն ընկած ժամանակահատվածում վարչական հսկողության իրականացման վերաբերյալ կազմված արձանագրությունը՝ 1-16 հավելվածներով՝ ըստ բնագավառների՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն և ի կատարումն կազմված արձանագրության հավելվածներում՝ ըստ բնագավառների հայտնաբերված խախտումներն ու թերությունները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության գործող օրենքների պահանջներին:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
3.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ
4. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
5.ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
7.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
8.ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

**Հավելված**
Արամուս համայնքի ավագանու
2016 թ. դեկտեմբերի 9-ի N 86 որոշման

Հավելված 1

## Արտակարգ իրավիճակների բնագավառում

1. Տարահանման հանձնաժողովի կողմից տարահանման պլանի մշակումը գտնվում է աշխատանքային փուլում:

5. ՈՒժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար պլանների համակողմանի ապահովման մասին հայտերը ներկայացվի ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն-գտնվում է մշակման փուլում:

7. Ընդունվել է ի գիտություն:

8. Կազմվել է քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայությունների հաստատված կանոնադրությունը:

10. Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմումը գտնվում է մշակման փուլում:

Հավելված 2

## Առևտրի և ծառայությունների բնագավառում

1. Կատարված է:

3. Կատարված է:

5. Կատարված է:

29. Կատարված է:

33. Կատարված է:

34. Կատարված է:

35. Կատարված է:

36. Կատարված է:

39. Կատարված է:

40. Կատարված է:

Հավելված 3

## Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում

14.2. Ընդունվել է ի գիտություն:

20.1. Ընդունվել է ի գիտություն:

20.2. Ընդունվել է ի գիտություն:

**Հավելված 6**

## Հողօգտագործման բնագավառում

**2.13.** Ընդունվել է ի կատարում – խախտումը վերացվել է:

**2.14.** Ընդունվել է ի կատարում – խախտումը վերացվել է:

**Հավելված 7**

## Կրթության բնագավառում

**2.** Ծրագրերի մշակում, իրավիճակի վերլուծության, կարիքների ճշգրտում և ընդգրկում զարգացման ծրագրերում – կատարման ժամկետը ընթացիկ տարվա ավարտ:

**Հավելված 8**

## Մշակույթի բնագավառում

**1.** Մշակույթի ոլորտի համայնքային ծրագրերի ներսում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում – կատարման ժամկետը՝ ընթացիկ տարվա ավարտը:

**4.** Մշակվել է ծրագրերի իրականացում տարվա ընթացքում:

**Հավելված 9**

## Պաշտպանության բնագավառում

**2.** Ընդունվել է ի կատարում – խախտումը վերացվել է:

**10.** Ընդունվել է ի գիտություն:

**15.** Ընդունվել է ի գիտություն:

**Հավելված 11**

## Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

**1.** Համայնքի բնակչության շրջանում անցկացվող ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումների ծրագիրը հաստատել համայնքի ղեկավարի կողմից – կատարման ժամկետը՝ ընթացիկ տարվա ավարտը:

**2.** Ընդունվել է ի գիտություն:

**3.** §Լավագույն գյուղական համայնք» միջոցառումների անցկացման համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, նպաստել համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը – կատարումը ընդունվել է ի գիտություն:

**4.** Նպաստել համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Անցկացման վերաբերյալ հիմքերը, փաստաթղթերը պահել աշխատակազմում – կատարումը ընդունվել է ի գիտություն:

**5.** Ֆիզկուլտուրային առողջարարական ու մարզական աշխատանքները անցկցնելու և առողջ կենսակերպի քարոզչության մասին հանրությանը տեղեկացնել ԶԼՄ-ների միջոցով և պաստառների տեսքով - ընդունվել է ի գիտություն:

**Հավելված 15**

## Քաղաքաշինության բնագավառում

**2.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի պատվիրում – պատվիրված է, կատարումը ընթացքի մեջ է:

**3.** Կազմել ընթացիկ քաղաքաշինական քարտեզ – կատարումը ընթացքի մեջ է:

**5.** Համայնքում վարել քաղաքաշինական մատյաններ՝ նմուշին համապատասխանող մատյաններով, կազմել քաղաքաշինական կանոնադրություն և տալ համայնքի ավագանու հաստատմանը – կատարված է:

**5.2.** Արամուս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 81-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի քաքղաքաշինական կանոնադրությունը:

**6.2.** ՃՀԱ կազմում ներառվում են տեխնիկական պայմանները – թերությունները վերացված են:

**6.3.** ՃՀԱ կազմում ընդգրկվա Մ1:500 սխեմայյում շրջակա միջավայրը ընդգրկված չէ - կատարումը ընթացքի մեջ է:

**7.** Ընդունել ի գիտություն և հետագայում իրականացնել հասարակական քննարկումներ և իրազեկում:

**Հավելված 16**

## Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ ՀՀ մարզպետարանների կողմից իրականացվող համայնքի ավագանու գործառույթը

**29.19.** Ընդունվել է ի գիտություն:

**29.20.** Արամուս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 81-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի քաքղաքաշինական կանոնադրությունը:

**29.24.** Ընդունվել է ի գիտություն:

**29.25.** Արամուս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 80 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 11-ի N 40 որոշումը:

**29.27.** Ընդունվել է ի գիտություն:

**29.29.** Ընդունվել է ի գիտություն:

### Համայնքի ղեկավարի գործառույթը

8.4. Կատարված է:

8.5. Ընդունվել է ի գիտություն:

8.6. Կատարված է:

8.16. Ընդունվել է ի գիտություն:

8.22. Ընդունվել է ի գիտություն:

### Համայնքի ղեկավարի այլ գործառույթը

17.2. Արամուս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 82 որոշմամբ ստեղծվել են համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններ::

17.3. Ընդունվել է ի գիտություն – կատարումը ընթացքի մեջ է:

17.17. Ընդունվել է ի գիտություն – կատարումը ընթացքի մեջ է:

17.20. Ընդունվել է ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**09 դեկտեմբեր 2016 թվականի N 87**

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով. ***համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել հողամասի օտարման սխեման (համաձայն հավելվածի)՝ համաձայն որի թույլատրել համայնքի ղեկավարին 2017 թվականին աճուրդ-վաճառքի միջոցով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության՝ 1հա այլ հողատեսք.

2. Արամուս համայնքում գտնվող, օտարման ենթակա՝ 07-013-0134-0052 կադաստրային ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 1հա այլ հողատեսքի համար մեկնարկային գին սահմանել՝ 202500 (երկու հարյուր երկու հազար հինգ հարյուր) դրամ:

3. Հողամասը տրամադրվում է գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կողմ -9** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ
4. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
5. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
7. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀՀ Կոտայքի մարզի Արամուս համայնքի ավագանու 09.12.2016թ. ն 17-րդ նիստի 87-րդ որոշումով հաստատված համայնքային սեփականություն համարվող օտարման ենթակա հողամասի հատակագիծ բաժանված լոտի.

Հավելված
2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 17
արտահերթ նիստի N 87 որոշման
Հաստատում եմ
Կոտայքի մարզի Արամուս
համայնքի ղեկավար
Հ. Նիկողոսյան




**Լոտ 1**. *Գյուղատնտեսական նշ. այլ հողատեսք, 1հա, կոդ 07-013-0134-0052*



Գնահատման գոտի
«Ուրց- Կոտայք-Շամիրամ»

ՀՀ*03502169*ԽՈՐՀՈՒՐԴ

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հաստատում եմ՝
համայնքի ղեկավար
____ 2016թ

Արամուս համայնք ին Հողհատկացման հիմքը ՀՀ կառ. 20.05.2005թ. N2050-Ն որ.
Անուն, ազգանուն

Կոտայք
Մարզ

Արամուս
Համայնք

Հասցե

Մասշտաբ 1:2000




| ՀՈՂԱՄԱՍԻ | | Անկյունների թվային կետեր | Կոորդինատներ Y | Կոորդինատներ X | Հեռավորու-թյունը (մետր) | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը) |
|---|---|---|---|---|---|---|
| Մակերեսը (քմ,հա) | 1.0000 | 1 | 8471230.8630 | 4456472.3839 | | |
| Ծածկագիրը | 0134- | 2 | 8471228.6896 | 4456480.8728 | 8.76 | |
| | | 3 | 8471221.9634 | 4456507.1441 | 27.12 | |
| Նպատակային նշանակությունը | գյուղատնտեսական | 4 | 8471216.1548 | 4456534.1143 | 27.59 | |
| | | 5 | 8471210.3452 | 4456551.0679 | 17.92 | |
| Գործառական նշանակությունը | գյուղ. այլ | 6 | 8471271.3754 | 4456544.6722 | 61.36 | |
| | | 7 | 8471289.3338 | 4456533.3074 | 21.25 | |
| Հողամասը ծանրաբեռնված է | — | 8 | 8471356.1795 | 4456511.2116 | 70.40 | |
| | | 9 | 8471293.4629 | 4456425.7288 | 106.02 | |
| | | 1 | 8471230.8630 | 4456472.3839 | 78.07 | |

| ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ | | |
|---|---|---|
| Հաշվառման համարը, կադաստրային ծածկագիրը | Գործառական նշանակությունը (անվանումը) | |
| | | |

Կատարող ______ (ստորագրություն) Վ. Վարդանյան (Անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը 0339 14.05.2014թ (տրման ամիս, ամսաթիվը)

Իրավաբանական անձի 03Ա 081920 (պետական գրանցման համար) «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ (անվանում) 24.11.2016թ (ամիս, ամսաթիվը) (ստորագրություն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
գ.Արամուս Կենտրոնական փողոց 17, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 դեկտեմբեր 2016 **թվականի** N 88-Ն

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 80-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և "Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

**1.**Արամուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի "Արամուս համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին" N 80-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

**2.**Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**Կողմ -9** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

2. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ

3.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻՆԱ

4. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

5.ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ

7.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ

8.ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ

9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Հավելված N 1
խմբագրված

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Արամուս համայնքի

ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N80 -Ն փոփոխված
2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 88-Ն որոշմամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հրայր Նիկողոսյան
(Անուն, հայրանուն, ազգանուն)

# Ð²Îì²Ì 1

## Ð²Ø²ÚÜøÆ ´ÚàôæºÆ º Î ²ØàôîÜºðÀ

(Ñ³½³ñ ¹ñ³Ùáí)

| îáÕÇ NN | ºÏ³ÙáõïÝ»ñÇ ³Ýí³ÝáõÙÁ | Ðá¹í³ÍÇ NN | ÀÝ¹³Ù»ÝÁ (ë.5+ë.6) | ³Û¹ Ãíáõ٠` | |
|---|---|---|---|---|---|
| | | | | í³ñã³Ï³Ý Ù³ë | ýáÝ¹³ÛÇÝ Ù³ë |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1000** | **ÀÜ¸²ØºÜÀ ºÎ²ØàôîÜºð, ³Û¹ Ãíáõ٠`** | | 85924.5 | 84924.5 | 4200.0 |
| **1100** | **1. Ð²ðÎºð ºì îàôðøºð, ³Û¹ Ãíáõ٠`** | **7100** | 17800.0 | 17800.0 | X |
| **1110** | **1.1 ¶áõÛù³ÛÇÝ Ñ³ñÏ»ñ ³Ýß³ñÅ ·áõÛùÇó, ³Û¹ Ãíáõ٠`** | **7131** | 8900.0 | 8900.0 | X |
| 1111 | ¶áõÛù³Ñ³ñÏ Ñ³Ù³ÛÝùÝ»ñÇ í³ñã³Ï³Ý ï³ñ³ÍùÝ»ñáõÙ ·ïÝíáÕ ß»Ýù»ñÇ ¨ ßÇÝáõÃÛáõÝÝ»ñÇ Ñ³Ù³ñ | | 2200.0 | 2200.0 | X |
| 1112 | ÐáÕÇ Ñ³ñÏ Ñ³Ù³ÛÝùÝ»ñÇ í³ñã³Ï³Ý ï³ñ³ÍùÝ»ñáõÙ ·ïÝíáÕ ÑáÕÇ Ñ³Ù³ñ | | 6700.0 | 6700.0 | X |
| **1120** | **1.2 ¶áõÛù³ÛÇÝ Ñ³ñÏ»ñ ³ÛÉ ·áõÛùÇó, ³Û¹ Ãíáõ٠`** | **7136** | | | X |
| 1121 | ¶áõÛù³Ñ³ñÏ ÷áË³¹ñ³ÙÇçáóÝ»ñÇ Ñ³Ù³ñ | | 8050.0 | 8050.0 | X |
| **1130** | **1.3 ²åñ³ÝùÝ»ñÇ û·ï³·áñÍÙ³Ý Ï³Ù ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý Çñ³Ï³Ý³óÙ³Ý ÃáõÛÉïíáõÃÛ³Ý í×³ñÝ»ñ, ³Û¹ Ãíáõ٠`** | **7145** | 850.0 | 850.0 | X |
| 1131 | î»Õ³Ï³Ý ïáõñù»ñ, ³Û¹ Ãíáõ٠` | 71452 | 850.0 | 850.0 | X |
| 1132 | ³) Ð³Ù³ÛÝùÇ ï³ñ³ÍùáõÙ Ýáñ ß»Ýù»ñÇ, ßÇÝáõÃÛáõÝÝ»ñÇ (Ý»ñ³éÛ³É áã ÑÇÙÝ³Ï³Ý) ßÇÝ³ñ³ñáõÃÛáõÝ (ï»Õ³¹ñÙ³Ý) ÃáõÛÉïíáõÃÛ³Ý Ñ³Ù³ñ, áñÇó` | | 120.0 | 120.0 | X |
| 1133 | ³ ³) ÐÇÙÝ³Ï³Ý ßÇÝáõÃÛáõÝÝ»ñÇ Ñ³Ù³ñ | | 120.0 | 120.0 | X |
| 1134 | ³µ) àã ÑÇÙÝ³Ï³Ý ßÇÝáõÃÛáõÝÝ»ñÇ Ñ³Ù³ñ | | | | X |
| 1137 | ¹) Ð³Ù³ÛÝùÇ ï³ñ³ÍùáõÙ á·»ÉÇó ËÙÇãùÝ»ñÇ ¨ (Ï³Ù) ÍË³Ëáï Ç ³ñï³¹ñ³ÝùÇ í³×³éùÇ, ÇëÏ Ñ³Ýñ³ÛÇÝ ëÝÝ¹Ç ûµÛ»Ï ï Ý»ñáõÙ` á·»ÉÇó ËÙÇãùÝ»ñÇ ¨ (Ï³Ù) ÍË³Ëáï Ç ³ñï³¹ñ³ÝùÇ Çñ³óÙ³Ý ÃáõÛÉïíáõÃÛ³Ý Ñ³Ù³ñ | | 430.0 | 430.0 | X |
| 1138 | ») Ð³Ù³ÛÝùÇ ï³ñ³ÍùáõÙ µ³óûÃÛ³ í³×³éù Ï³½Ù³Ï»ñå»Éáõ ÃáõÛÉïíáõÃÛ³Ý Ñ³Ù³ñ | | | | X |
| 1139 | q) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնա-կան կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | | 300.0 | 300.0 | X |
| **1200** | **2. ä²Þîàö²Î²Ü ¸ð²Ø²ÞÜàðÐÜºð, ³Û¹ Ãíáõ٠`** | **7300** | 60399.5 | 60399.5 | 0.0 |
| **1250** | **2.5 ÀÝÃ³óÇÏ Ý»ñùÇÝ å³ßïáÝ³Ï³Ý ¹ñ³Ù³ßÝáñÑÝ»ñ` ëï³óí³Í Ï³é³í³ñÙ³Ý ³ÛÉ Ù³Ï³ñ¹³ÏÝ»ñÇó, áñÇó`** | **7331** | 60399.5 | 60399.5 | X |
| 1251 | ³) ä»ï³Ï³Ý µÛáõç»Çó ýÇÝ³Ýë³Ï³Ý Ñ³Ù³Ñ³ñÃ»óÙ³Ý ëÏ½µáõÝùáí ïñ³Ù³¹ñíáÕ ¹áï³óÇ³Ý»ñ | | 60399.5 | 60399.5 | X |
| 1257 | ·) ä»ï³Ï³Ý µÛáõç»Çó Ñ³Ù³ÛÝùÇ í³ñã³Ï³Ý µÛáõç»ÇÝ ïñ³Ù³¹ñíáÕ Ýå³ï³Ï³ÛÇÝ Ñ³ïÏ³óáõÙÝ»ñ (ëáõµí»ÝóÇ³Ý»ñ) | | | | X |
| **1300** | **3. ²ÚÈ ºÎ²ØàôîÜºð, ³Û¹ Ãíáõ٠`** | **7400** | 7725.0 | 7725.0 | 0.0 |
| **1330** | **3.3 ¶áõÛùÇ í³ñÓ³Ï³ÉáõÃÛáõÝÇó »Ï³Ùáõï Ý»ñ, ³Û¹ Ãíáõ٠`** | **7415** | 2900.0 | 2900.0 | X |
| 1331 | Ð³Ù³ÛÝùÇ ë»÷³Ï³ÝáõÃÛáõÝ Ñ³Ù³ñíáÕ ÑáÕ»ñÇ í³ñÓ³í×³ñÝ»ñ | | 2900.0 | 2900.0 | X |
| **1340** | **3.4 Ð³Ù³ÛÝùÇ µÛáõç»Ç »Ï³Ùáõï Ý»ñ ³åñ³ÝùÝ»ñÇ Ù³ï³Ï³ñ³ñáõÙÇó ¨ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñÇ Ù³ïáõóáõÙÇó, ³Û¹ Ãíáõ٠`** | **7421** | | | X |

(Ñ³½³ñ ¹ñ³Ùáí)

| î áÕÇ NN | º Ï ³Ù ï ³ ï »ë ³ ÏÝ»ñÁ | Ðá¹ í ³ ÍÇ NN | ÀÝ¹ ³ Ù»ÝÁ (ë.5+ë.6) | ³ Û¹ Ã í áõÙ` | |
|---|---|---|---|---|---|
| | | | | í ³ ñã ³ Ï ³ Ý Ù ³ ë | ýáÝ¹ ³ ÛÇÝ Ù ³ ë |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1343 | ú ñ»Ýùá í ë ³ ÑÙ ³ Ý í ³ Í ¹»å ù»ñáõÙ Ñ ³ Ù ³ ÛÝù ³ ÛÇÝ ÑÇÙÝ ³ ñ ÏÝ»ñÇ ÏáÕÙÇó ³ é ³ Ýó ï »Õ ³ Ï ³ Ý ï áõñùÇ · ³ ÝÓÙ ³ Ý Ù ³ ï áõó í áÕ Í ³ é ³ ÛáõÃÛáõÝÝ»ñÇ Ï ³ Ù Ï ³ ï ³ ñ í áÕ | | 800.0 | 800.0 | |
| **1350** | **3.5 Ì ³ ñã ³ Ï ³ Ý · ³ ÝÓáõÙÝ»ñ, ³ Û¹ Ã í áõÙ`** | **7422** | 3460.0 | 3460.0 | X |
| 1351 | î »Õ ³ Ï ³ Ý í × ³ ñÝ»ñ | | 100.0 | 100.0 | X |
| 1352 | Ð ³ Ù ³ ÛÝùÇ í ³ ñã ³ Ï ³ Ý ï ³ ñ ³ Íùáõ Ù ÇÝùÝ ³ Ï ³ Ù Ï ³ éáõó í ³ Í ß»Ýù»ñÇ, ßÇÝáõÃÛáõÝÝ»ñÇ ûñÇÝ ³ Ï ³ Ý ³ óÙ ³ Ý Ñ ³ Ù ³ ñ í × ³ ñÝ»ñ | | 1060.0 | 1060.0 | X |
| 1353 | Աղբահանության վճարներ | | 2300.0 | 2300.0 | |
| **1360** | **3.6 Øáõ ï ù»ñ ï áõÛÅ»ñÇó, ï áõ · ³ ÝùÝ»ñÇó, ³ Û¹ Ã í áõÙ`** | **7431** | 300.0 | 300.0 | X |
| 1361 | Ì ³ ñã ³ Ï ³ Ý Çñ ³ í ³ Ë ³ Ë ï áõÙÝ»ñÇ Ñ ³ Ù ³ ñ ï »Õ ³ Ï ³ Ý ÇÝùÝ ³ Ï ³ é ³ í ³ ñÙ ³ Ý Ù ³ ñÙÇÝÝ»ñÇ ÏáÕÙÇó | | 300.0 | 300.0 | X |
| 1390 | **3.9 ²ÛÉ »Ï ³ Ùáõ ï Ý»ñ, ³ Û¹ Ã í áõÙ`** | **7451** | 265.0 | 265.0 | 0.0 |
| 1392 | Ì ³ ñã ³ Ï ³ Ý µÛáõç»Ç å ³ Ñáõë ï ³ ÛÇÝ ýáÝ¹Çó ýáÝ¹ ³ ÛÇÝ µÛáõç» Ï ³ ï ³ ñ í áÕ Ñ ³ ï Ï ³ óáõÙÝ»ñÇó Ùáõ ï ù»ñ | | 4200.0 | X | 4200.0 |
| 1393 | ú ñ»Ýùá í ¨ Çñ ³ í ³ Ï ³ Ý ³ ÛÉ ³ Ï ï »ñáí ë ³ ÑÙ ³ Ý í ³ Í` Ñ ³ Ù ³ ÛÝùÇ µÛáõç» Ùáõ ï ù ³ · ñÙ ³ Ý »ÝÃ ³ Ï ³ ³ ÛÉ »Ï ³ Ùáõ ï Ý»ñ | | 265.0 | 265.0 | |

# Ð²Î Ì²Ì 2

## Ð²Ø²ÚÜøÆ ´Úàôæ»Æ Ì²Êê»ðÀ` Àêî ´Úàôæ»î²ÚÆÜ Ì²Êê»ðÆ ¶àðÌ²è²Î²Ü ¸²ê²Î²ð¶Ø²Ü

(Ñ³½³ñ ¹ñ³ÙÝ»ñáí)

| îáÕÇ NN | ´³-ÅÇÝ | Êáõµ | ¸³ë | ´Ûáõç» ï³ÇÝ Í³Ëë»ñÇ ·áñÍ³é³Ï³Ý ¹³ë³Ï³ñ·Ù³Ý µ³ÅÇÝÝ»ñÇ, ËÙµ»ñÇ ¨ ¹³ë»ñÇ ³Ýí³ÝáõÙÝ»ñÁ | ÀÝ¹³Ù»ÝÁ (ë.7 +ë.8) | ³Û¹ Ãíáõ٠` í³ñã³Ï³Ý µÛáõç» | ýáÝ¹³ÛÇÝ µÛáõç» |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | *X* | *X* | *X* | **ÀÜ¸²Ø»ÜÀ Ì²Êê»ð** | 92358.9 | 85924.5 | 10634.4 |
| 2100 | **01** | **0** | **0** | **ÀÜ¸Ð²Üàôð ´ÜàôÚÂÆ Ð²Üð²ÚÆÜ Ì²è²ÚàôÂÚàôÜÜ»ð, ³Û¹ Ãíáõ٠`** | 44906.5 | 41276.5 | 3630.0 |
| 2110 | **01** | **1** | **0** | ***úñ»Ýë¹Çñ ¨ ·áñÍ³¹Çñ Ù³ñÙÇÝÝ»ñ, å»ï³Ï³Ý Ï³é³í³ñáõÙ, ýÇÝ³Ýë³Ï³Ý ¨ Ñ³ñÏ³µÛáõç» ï³ÇÝ Ñ³ñ³µ»ñáõÃÛáõÝÝ»ñ, ³ñï³ùÇÝ Ñ³ñ³µ»ñáõÃÛáõÝÝ»ñ, áñÇó`*** | 39826.5 | 39646.5 | 180.0 |
| 2111 | 01 | 1 | 1 | úñ»Ýë¹Çñ ¨ ·áñÍ³¹Çñ Ù³ñÙÇÝÝ»ñ, å»ï³Ï³Ý Ï³é³í³ñáõÙ | 39826.5 | 39646.5 | 180.0 |
| 2130 | **01** | **3** | **0** | ***ÀÝ¹Ñ³Ýáõñ µÝáõÛÃÇ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ, áñÇó`*** | 1140.0 | 1140.0 | |
| 2133 | 01 | 3 | 3 | ÀÝ¹Ñ³Ýáõñ µÝáõÛÃÇ ³ÛÉ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ | 1140.0 | 1140.0 | |
| 2150 | **01** | **5** | **0** | ***ÀÝ¹Ñ³Ýáõñ µÝáõÛÃÇ Ñ³Ýñ³ÛÇÝ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñÇ ·Íáí Ñ»ï³½áï³Ï³Ý ¨ Ý³Ë³·Í³ÛÇÝ ³ßË³ï³ÝùÝ»ñ, áñÇó`*** | | | |
| 2151 | 01 | 5 | 1 | ÀÝ¹Ñ³Ýáõñ µÝáõÛÃÇ Ñ³Ýñ³ÛÇÝ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ ·Íáí Ñ»ï³½áï³Ï³Ý ¨ Ý³Ë³·Í³ÛÇÝ ³ßË³ï³ÝùÝ»ñ | 3450.0 | | 3450.0 |
| 2160 | **01** | **6** | **0** | ***ÀÝ¹Ñ³Ýáõñ µÝáõÛÃÇ Ñ³Ýñ³ÛÇÝ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ (³ÛÉ ¹³ë»ñÇÝ ãå³ïÏ³ÝáÕ), áñÇó`*** | 920.0 | 920.0 | |
| 2161 | 01 | 6 | 1 | ÀÝ¹Ñ³Ýáõñ µÝáõÛÃÇ Ñ³Ýñ³ÛÇÝ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ (³ÛÉ ¹³ë»ñÇÝ ãå³ïÏ³ÝáÕ) | 920.0 | 920.0 | |
| 2200 | **02** | **0** | **0** | **ä²Þîä²ÜàôÂÚàôÜ, ³Û¹ Ãíáõ٠`** | 200.0 | 200.0 | |
| 2220 | **02** | **2** | **0** | ***ø³Õ³ù³óÇ³Ï³Ý å³ßïå³ÝáõÃÛáõÝ, áñÇó`*** | 100.0 | 100.0 | |
| 2221 | 02 | 2 | 1 | ø³Õ³ù³óÇ³Ï³Ý å³ßïå³ÝáõÃÛáõÝ | 100.0 | 100.0 | |
| 2250 | **02** | **5** | **0** | ***ä³ßïå³ÝáõÃÛáõÝ (³ÛÉ ¹³ë»ñÇÝ ãå³ïÏ³ÝáÕ), áñÇó`*** | 100.0 | 100.0 | |
| 2251 | 02 | 5 | 1 | ä³ßïå³ÝáõÃÛáõÝ (³ÛÉ ¹³ë»ñÇÝ ãå³ïÏ³ÝáÕ) | 100.0 | 100.0 | |
| 2300 | **03** | **0** | **0** | **Ð²ê²ð²Î²Î²Ü Î²ð¶, ²Üìî²Ü¶àôÂÚàôÜ ¨ ¸²î²Î²Ü ¶àðÌàôÜºàôÂÚàôÜ, ³Û¹ Ãíáõ٠`** | 100.0 | 100.0 | |
| 2320 | **03** | **2** | **0** | ***öñÏ³ñ³ñ Í³é³ÛáõÃÛáõÝ, áñÇó`*** | 100.0 | 100.0 | |
| 2321 | 03 | 2 | 1 | öñÏ³ñ³ñ Í³é³ÛáõÃÛáõÝ | 100.0 | 100.0 | |
| 2400 | **04** | **0** | **0** | **îÜîºê²Î²Ü Ð²ð²´ºðàôÂÚàôÜÜºð, ³Û¹** | -800.0 | 400.0 | -1200.0 |
| 2420 | **04** | **2** | **0** | ***¶ÛáõÕ³ïÝï»ëáõÃÛáõÝ, ³Ýï³é³ÛÇÝ ïÝï»ëáõÃÛáõÝ, ÓÏÝáñëáõÃÛáõÝ ¨ áñëáñ¹áõÃÛáõÝ, áñÇó`*** | 100.0 | 100.0 | |
| 2421 | 04 | 2 | 1 | ¶ÛáõÕ³ïÝï»ëáõÃÛáõÝ | 100.0 | 100.0 | |
| 2430 | **04** | **3** | **0** | ***Ì³é»ÉÇù ¨ ¿Ý»ñ·»ïÇÏ³, áñÇó`*** | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2431 | 04 | 3 | 1 | ø³ñ³ÍáõË ¨ ³ÛÉ Ï³ñÍñ µÝ³Ï³Ý í³é»ÉÇù | | | |
| 2432 | 04 | 3 | 2 | Ü³íÃ³ÙÃ»ñù ¨ µÝ³Ï³Ý ·³½ | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2450 | **04** | **5** | **0** | ***îñ³Ýëåáñï, áñÇó`*** | 4950.0 | 300.0 | 4650.0 |
| 2451 | 04 | 5 | 1 | ×³Ý³å³ñÑ³ÛÇÝ ïñ³Ýëåáñï | 4950.0 | 300.0 | 4650.0 |
| 2490 | **04** | **9** | **0** | ***îÝï»ë³Ï³Ý Ñ³ñ³µ»ñáõÃÛáõÝÝ»ñ (³ÛÉ ¹³ë»ñÇÝ ãå³ïÏ³ÝáÕ), áñÇó`*** | -5850.0 | 0.0 | -5850.0 |
| 2491 | 04 | 9 | 1 | îÝï»ë³Ï³Ý Ñ³ñ³µ»ñáõÃÛáõÝÝ»ñ (³ÛÉ ¹³ë»ñÇÝ ãå³ïÏ³ÝáÕ) | -5850.0 | 0.0 | -5850.0 |
| 2500 | **05** | **0** | **0** | **Þðæ²Î² ØÆæ²ì²ÚðÆ ä²Þîä²ÜàôÂÚàôÜ, ³Û¹ Ãíáõ٠`** | 5070.0 | 3240.0 | 1830.0 |
| 2510 | **05** | **1** | **0** | ***²Õµ³Ñ³ÝáõÙ, áñÇó`*** | 3200.0 | 3200.0 | 0.0 |
| 2511 | 05 | 1 | 1 | ²Õµ³Ñ³ÝáõÙ | 3200.0 | 3200.0 | 0.0 |
| 2520 | **05** | **2** | **0** | ***Î»Õï³çñ»ñÇ Ñ»é³óáõÙ, áñÇó`*** | 1830.0 | | 1830.0 |
| 2521 | 05 | 2 | 1 | Î»Õï³çñ»ñÇ Ñ»é³óáõÙ | 1830.0 | | 1830.0 |
| 2530 | **05** | **3** | **0** | ***Þñç³Ï³ ÙÇç³í³ÛñÇ ³Õïáïí³Ý ¹»Ù å³Ûù³ñ, áñÇó`*** | 40.0 | 40.0 | 0.0 |
| 2531 | 05 | 3 | 1 | Þñç³Ï³ ÙÇç³í³ÛñÇ ³Õïáïí³Ý ¹»Ù å³Ûù³ñ | 40.0 | 40.0 | 0.0 |

| î áõÇ NN | ´ ³-ÅÇÝ | Ê áõÙµ | ¸ ³ë | ´▯áõç» ï ³▯ÇÝ Í ³ Ëë»ñÇ ·áñÍ ³ é ³ Ï ³ Ý ¹ ³ ë ³ Ï ³ ñ·Ù ³ Ý µ ³ ÅÇÝÝ»ñÇ, ËÙµ»ñÇ ¨ ¹ ³ ë»ñÇ ³ Ý í ³ ÝáõÙÝ»ñÁ | ÀÝ¹ ³ Ù»ÝÁ (ë.7 +ë.8) | ³▯¹ Ã í áõÙ` | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | í ³ ñã ³ Ï ³ Ý µ▯áõç» | ýáÝ¹ ³▯ÇÝ µ▯áõç» |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2600 | **06** | **0** | **0** | **´ Ü ² Î ² ð ² Ü ² ÚÆÜ ÞÆÜ ² ð ² ðàôÂÚàôÜ º ì Î àØàôÜ ²È Ì ² è ² ÚàôÂÚàôÜ, ³▯¹ Ã í áõÙ`** | 3210.0 | 1730.0 | 1480.0 |
| 2640 | **06** | **4** | **0** | ***öáÕáóÝ»ñÇ Éáõë ³ í áñáõÙ, áñÇó`*** | 3210.0 | 1730.0 | 1480.0 |
| 2641 | 06 | 4 | 1 | ö áÕáóÝ»ñÇ Éáõë ³ í áñáõÙ | 3210.0 | 1730.0 | 1480.0 |
| 2700 | **07** | **0** | **0** | **² èàÔæ ² ä ² ÐàôÂÚàôÜ, ³▯¹ Ã í áõÙ`** | 4000.0 | 4000.0 | 0.0 |
| 2730 | **07** | **3** | **0** | ***ÐÇí ³ Ý¹ ³ Ýáó ³▯ÇÝ Í ³ é ³▯áõÃ▯áõÝÝ»ñ, áñÇó`*** | 4000.0 | 4000.0 | 0.0 |
| 2731 | 07 | 3 | 1 | ÀÝ¹Ñ ³ Ýáõñ µÝáõÃÇ ÑÇí ³ Ý¹ ³ Ýáó ³▯ÇÝ Í ³ é ³▯áõÃ▯áõÝÝ»ñ | 4000.0 | 4000.0 | 0.0 |
| 2800 | **08** | **0** | **0** | **Ð ² Ü¶Æêî , ØÞ ² Î àôÚÂ º ì Î ðàÜ, ³▯¹ Ã í áõÙ`** | 29158.4 | 24264.0 | 4894.4 |
| 2810 | 08 | 1 | 0 | ***Ð ³ Ý·ëï Ç ¨ ëåáñï Ç Í ³ é ³▯áõÃ▯áõÝÝ»ñ, áñÇó`*** | 360.0 | 360.0 | 0.0 |
| 2811 | 08 | 1 | 1 | Ð ³ Ý·ëï Ç ¨ ëåáñï Ç Í ³ é ³▯áõÃ▯áõÝÝ»ñ | 360.0 | 360.0 | 0.0 |
| 2820 | **08** | **2** | **0** | ***Øß ³ Ïáõà ³▯ÇÝ Í ³ é ³▯áõÃ▯áõÝÝ»ñ, áñÇó`*** | 28348.4 | 23454.0 | 4894.4 |
| 2821 | 08 | 2 | 1 | ¶ñ ³ ¹ ³ ñ ³ ÝÝ»ñ | | | |
| 2822 | 08 | 2 | 2 | Â ³ Ý· ³ ñ ³ ÝÝ»ñ ¨ óáõó ³ ëñ ³ ÑÝ»ñ | | | |
| 2823 | 08 | 2 | 3 | Øß ³ Ïáõ▯ÃÇ ïÝ»ñ, ³ ÏáõÙµÝ»ñ, Ï»Ýï ñáÝÝ»ñ | 26648.4 | 21754.0 | 4894.4 |
| 2824 | 08 | 2 | 4 | ²▯É Ùß ³ Ïáõà ³▯ÇÝ Ï ³ ½Ù ³ Ï»ñåáõÃ▯áõÝÝ»ñ | 1150.0 | 1150.0 | |
| 2827 | 08 | 2 | 7 | Ðáõß ³ ñÓ ³ ÝÝ»ñÇ ¨ Ùß ³ Ïáõ▯Ã ³▯ÇÝ ³ ñÅ»ùÝ»ñÇ í»ñ ³ Ï ³ Ý·ÝáõÙ ¨ å ³ Ñå ³ ÝáõÙ | 900.0 | 900.0 | |
| 2830 | **08** | **3** | **0** | ***è ³ ¹Çá ¨ Ñ»éáõëï ³ Ñ ³ Õáñ¹áõÙÝ»ñÇ Ñ»é ³ ñÓ ³ ÏÙ ³ Ý ¨ Ññ ³ ï ³ ñ ³ Ïã ³ Ï ³ Ý Í ³ é ³▯áõÃ▯áõÝÝ»ñ, áñÇó`*** | 350.0 | 350.0 | |
| 2831 | 08 | 3 | 1 | Ð»éáõëï ³ é ³ ¹ÇáÑ ³ Õáñ¹áõÙÝ»ñ | 100.0 | 100.0 | |
| 2832 | 08 | 3 | 2 | Ðñ ³ ï ³ ñ ³ ÏãáõÃ▯áõÝÝ»ñ, ËÙµ ³ ·ñáõÃ▯áõÝÝ»ñ | | | |
| 2833 | 08 | 3 | 3 | î »Õ»Ï ³ ïí áõÃ▯ ³ Ý Ó»éùµ»ñáõÙ | 250.0 | 250.0 | 0.0 |
| 2840 | **08** | **4** | **0** | ***ÎñáÝ ³ Ï ³ Ý ¨ Ñ ³ ë ³ ñ ³ Ï ³ Ï ³ Ý ³▯É Í ³ é ³▯áõÃ▯áõÝÝ»ñ, áñÇó`*** | 100.0 | 100.0 | 0.0 |
| 2841 | 08 | 4 | 1 | ºñÇï ³ ë ³ ñ¹ ³ Ï ³ Ý Íñ ³ ·ñ»ñ | | | |
| 2842 | 08 | 4 | 2 | ø ³ Õ ³ ù ³ Ï ³ Ý Ïáõë ³ ÏóáõÃ▯áõÝÝ»ñ, Ñ ³ ë ³ ñ ³ Ï ³ Ï ³ Ý Ï ³ ½Ù ³ Ï»ñåáõÃ▯áõÝÝ»ñ, ³ ñÑÙÇáõÃ▯áõÝÝ»ñ | 100.0 | 100.0 | |
| 2900 | **09** | **0** | **0** | **Î ðÂàôÂÚàôÜ, ³▯¹ Ã í áõÙ`** | 2200.0 | 2200.0 | 0.0 |
| | **09** | **1** | **0** | **Ü ³ Ë ³ ¹åñáó ³ Ï ³ Ý ¨ ï ³ ññ ³ Ï ³ Ý ÁÝ¹Ñ ³ Ýáõñ ÏñÃáõÃ▯áõÝ, áñÇó`** | 0.0 | 0.0 | 0.0 |
| | 09 | 1 | 1 | Ü ³ Ë ³ ¹åñáó ³ Ï ³ Ý ÏñÃáõÃ▯áõÝ | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2940 | **09** | **4** | **0** | ***´ ³ ñÓñ ³ ·áõ▯Ý ÏñÃáõÃ▯áõÝ, áñÇó`*** | 2200.0 | 2200.0 | 0.0 |
| 2941 | 09 | 4 | 1 | ´ ³ ñÓñ ³ ·áõ▯Ý Ù ³ ëÝ ³ ·Ç ï ³ Ï ³ Ý ÏñÃáõÃ▯áõÝ | 2200.0 | 2200.0 | 0.0 |
| 3000 | **10** | **0** | **0** | **êàòÆ ²È² Î ² Ü ä ² Þî ä ² ÜàôÂÚàôÜ, ³▯¹ Ã í áõÙ`** | 3925.0 | 3925.0 | 0.0 |
| 3070 | **10** | **7** | **0** | ***êáóÇ ³ É ³ Ï ³ Ý Ñ ³ ï áõÏ ³ ñ ï áÝáõÃ▯áõÝÝ»ñ ( ³▯É ¹ ³ ë»ñÇÝ ãå ³ ï Ï ³ ÝáÕ), áñÇó`*** | 3925.0 | 3925.0 | 0.0 |
| 3071 | 10 | 7 | 1 | êáóÇ ³ É ³ Ï ³ Ý Ñ ³ ï áõÏ ³ ñ ï áÝáõÃ▯áõÝÝ»ñ ( ³▯É ¹ ³ ë»ñÇÝ ãå ³ ï Ï ³ ÝáÕ) | 3925.0 | 3925.0 | 0.0 |
| 3100 | **11** | **0** | **0** | **ÐÆØÜ ² Î ² Ü ´ ² ÄÆÜÜ ºðÆÜ â ¸ ² ê ì àÔ ä ² Ðàôê î ² ÚÆÜ üàÜ ¸ º ð, ³▯¹ Ã í áõÙ`** | 0.0 | 4200.0 | 4200.0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ***ÐÐ Ï ³ é ³ í ³ ñáõÃ▯ ³ Ý ¨ Ñ ³ Ù ³▯ÝùÝ»ñÇ å ³ Ñáõëï ³▯ÇÝ ýáÝ¹, áñÇó`*** | 0.0 | 4200.0 | 4200.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ÐÐ Ñ ³ Ù ³▯ÝùÝ»ñÇ å ³ Ñáõëï ³▯ÇÝ ýáÝ¹ | 0.0 | 4200.0 | 4200.0 |

# Ð²Î Ì²Ì 3

## Ð²Ø²ÚÜøÆ ´Úàôæº Æ Ì²ÊêºðÀ` Àêî ´Úàôæºî²ÚÆÜ Ì²Êêºð Æ îÜîºê²¶Æî²Î²Ü ¸²ê²Î²ð¶Ø²Ü

(Ñ³½³ñ ¹ñ³Ùáí)

| îáÕ NN | ´Ûáõç»ï³ÛÇÝ Í³Ëë»ñÇ ïÝï»ë³·Ç ï³Ï³Ý ¹³ë³Ï³ñ·Ù³Ý Ñá¹í³ÍÝ»ñÇ | | ÀÝ¹³Ù»ÝÁ (ë.5+ë.6) | ³Û¹ ÃíáõÙ` | |
|---|---|---|---|---|---|
| | ³Ýí³ÝáõÙÝ»ñÁ | NN | | í³ñã³Ï³Ý Ù³ë | ýáÝ¹³ÛÇÝ Ù³ë |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | **ÀÜ¸²ØºÜÀ Ì²Êêºð, ³Û¹ ÃíáõÙ`** | | 92358.9 | 85924.5 | 10634.4 |
| 4050 | **². ÀÜÂ²òÆÎ Ì²Êêºð, ³Û¹ ÃíáõÙ`** | x | 85924.5 | 85924.5 | X |
| 4100 | **1.1 ²ÞÊ²î²ÜøÆ ì²ðÒ²îðàôÂÚàôÜ, ³Û¹** | x | 54314.0 | 54314.0 | X |
| 4110 | **¸ð²Ø²ÚÆÜ ìÖ²ðìàÔ ²ÞÊ²î²ì²ðÒºð ºì Ð²ìºÈ²ìÖ²ðÜºð, áñÇó`** | x | 54314.0 | 54314.0 | X |
| 4111 | **-²ßË³ïáÕÝ»ñÇ ³ßË³ï³í³ñÓ»ñ ¨ Ñ³í»É³í×³ñÝ»ñ** | **4111** | 50014.0 | 50014.0 | X |
| 4112 | **- ä³ñ·¨³ïñáõÙÝ»ñ, ¹ñ³Ù³Ï³Ý Ëñ³Ëáõë³ÝùÝ»ñ ¨ Ñ³ïáõÏ í×³ñÝ»ñ** | **4112** | 4500.0 | 4500.0 | X |
| 4200 | **1.2 Ì²è²ÚàôÂÚàôÜÜºðÆ ºì ²äð²ÜøÜºðÆ Òºèø ´ºðàôØ, ³Û¹ ÃíáõÙ`** | x | 16995.5 | 16995.5 | X |
| 4210 | ***Þ²ðàôÜ²Î²Î²Ü Ì²Êêºð, áñÇó`*** | x | 5850.0 | 5850.0 | X |
| 4211 | **-¶áñÍ³éÝ³Ï³Ý ¨ µ³ÝÏ³ÛÇÝ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñÇ Í³Ëë»ñ** | **4211** | 100.0 | 100.0 | X |
| 4212 | **-¾Ý»ñ·»ïÇÏ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4212** | 3050.0 | 3050.0 | X |
| 4213 | **-ÎáÙáõÝ³É Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4213** | 1300.0 | 1300.0 | X |
| 4214 | **-Î³åÇ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4214** | 1150.0 | 1150.0 | X |
| 4215 | **-²å³Ñáí³·ñ³Ï³Ý Í³Ëë»ñ** | **4215** | 100.0 | 100.0 | X |
| 4216 | **-¶áõÛùÇ ¨ ë³ñù³íáñáõÙÝ»ñÇ í³ñÓ³Ï³ÉáõÃÛáõÝ** | **4216** | 150.0 | 150.0 | X |
| 4217 | **-²ñï³·»ñ³ï»ëã³Ï³Ý Í³Ëë»ñ** | **4217** | 0.0 | 0.0 | X |
| 4220 | ***¶àðÌàôÔàôØÜºðÆ ºì Þðæ²¶²ÚàôÂÚàôÜÜºðÆ Ì²Êêºð, áñÇó`*** | x | 0.0 | 0.0 | X |
| 4221 | **-Ü»ñùÇÝ ·áñÍáõÕáõÙÝ»ñ** | **4221** | 0.0 | 0.0 | X |
| 4222 | **-²ñï³ë³ÑÙ³ÝÛ³Ý ·áñÍáõÕáõÙÝ»ñÇ ·Íáí Í³Ëë»ñ** | **4222** | 0.0 | 0.0 | X |
| 4223 | **-²ÛÉ ïñ³Ýëåáñï³ÛÇÝ Í³Ëë»ñ** | **4229** | 0.0 | 0.0 | X |
| 4230 | ***ä²ÚØ²Ü²¶ð²ÚÆÜ ²ÚÈ Ì²è²ÚàôÂÚàôÜÜºðÆ Òºèø ´ºðàôØ, áñÇó`*** | x | 4780.0 | 4780.0 | X |
| 4231 | **-ì³ñã³Ï³Ý Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4231** | | | X |
| 4232 | **-Ð³Ù³Ï³ñ·ã³ÛÇÝ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4232** | 255.0 | 255.0 | X |
| 4233 | **-²ßË³ï³Ï³½ÙÇ Ù³ëÝ³·Çï³Ï³Ý ½³ñ·³óÙ³Ý Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4233** | | | X |
| 4234 | **-î»Õ»Ï³ïí³Ï³Ý Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4234** | 250.0 | 250.0 | X |
| 4235 | **-Î³é³í³ñã³Ï³Ý Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4235** | 1035.0 | 1035.0 | X |
| 4236 | **- Î»Ýó³Õ³ÛÇÝ ¨ Ñ³Ýñ³ÛÇÝ ëÝÝ¹Ç Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4236** | | | X |
| 4237 | **-Ü»ñÏ³Û³óáõóã³Ï³Ý Í³Ëë»ñ** | **4237** | | | X |
| 4238 | **-ÀÝ¹Ñ³Ýáõñ µÝáõÛÃÇ ³ÛÉ Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4239** | 3140.0 | 3140.0 | X |
| 4240 | ***²ÚÈ Ø²êÜ²¶Æî²Î²Ü Ì²è²ÚàôÂÚàôÜÜºðÆ Òºèø ´ºðàôØ, áñÇó`*** | x | 985.0 | 985.0 | X |
| 4241 | **-Ø³ëÝ³·Çï³Ï³Ý Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ** | **4241** | 985.0 | 985.0 | X |
| 4250 | ***ÀÜÂ²òÆÎ Üàðàô¶àôØ ºì ä²Ðä²ÜàôØ, áñÇó (Í³é³ÛáõÃÛáõÝÝ»ñ ¨ ÝÛáõÃ»ñ)*** | x | 550.0 | 550.0 | X |
| 4251 | **-Þ»Ýù»ñÇ ¨ Ï³éáõÛóÝ»ñÇ ÁÝÃ³óÇÏ Ýáñá·áõÙ ¨ å³Ñå³ÝáõÙ** | **4251** | 300.0 | 300.0 | X |
| 4252 | **-Ø»ù»Ý³Ý»ñÇ ¨ ë³ñù³íáñáõÙÝ»ñÇ ÁÝÃ³óÇÏ Ýáñá·áõÙ ¨ å³Ñå³ÝáõÙ** | **4252** | 350.0 | 350.0 | X |
| 4260 | ***ÜÚàôÂºð, áñÇó*** | x | 4830.5 | 4830.5 | X |
| 4261 | **-¶ñ³ë»ÝÛ³Ï³ÛÇÝ ÝÛáõÃ»ñ ¨ Ñ³·áõëï** | **4261** | 800.0 | 800.0 | X |
| 4262 | **-¶ÛáõÕ³ïÝï»ë³Ï³Ý ³åñ³ÝùÝ»ñ** | **4262** | | | X |
| 4263 | **-Ì»ñ³å³ïñ³ëïÙ³Ý ¨ áõëáõóÙ³Ý ÝÛáõÃ»ñ (³ßË³ïáÕÝ»ñÇ í»ñ³å³ïñ³ëïáõÙ)** | **4263** | | | X |
| 4264 | **-îñ³Ýëåáñï³ÛÇÝ ÝÛáõÃ»ñ** | **4264** | 3700.0 | 3700.0 | X |
| 4265 | **-Þñç³Ï³ ÙÇç³í³ÛñÇ å³ßïå³ÝáõÃÛ³Ý ¨ ·Çï³Ï³Ý ÝÛáõÃ»ñ** | **4265** | | | X |

| î áõÇ NN | ´Ûáõç» ï ³ ÙÇÝ í ³ Ëë»ñÇ ï Ý ï »ë ³ ·Ç ï ³ Ï ³ Ý ¹ ³ ë ³ Ï ³ ñ·Ù ³ Ý Ñá¹í í ³ ÍÝ»ñÇ ³ Ý í ³ ÝáõÙÝ»ñÁ | NN | ÀÝ¹ ³ Ù»ÝÁ (ë.5+ë.6) | ³ Û¹ ÃíáõÙ` | |
|---|---|---|---|---|---|
| | | | | í ³ ñã ³ Ï ³ Ý Ù ³ ë | ýáÝ¹ ³ ÛÇÝ Ù ³ ë |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4266 | - ² éáõÇ ³ å ³ Ñ ³ Ï ³ Ý ¨ É ³ µáñ ³ ï áñ Ý Ûáõà»ñ | 4266 | | | X |
| 4267 | - Î »Ýó ³ Õ ³ ÛÇÝ ¨ Ñ ³ Ýñ ³ ÛÇÝ ëÝÝ¹Ç ÝÛáõà»ñ | 4267 | 510.5 | 510.5 | X |
| 4500 | 1.5 ¸ ð ² Ø ² ÞÜàðÐÜ º ð, ³ Û¹ ÃíáõÙ` | x | 100.0 | 100.0 | X |
| 4530 | *ÀÜÂ ² òÆÎ ¸ ð ² Ø ² ÞÜàðÐÜ º ð ä º î ² Î ² Ü Ð ² î Ì ² ÌÆ ² ÚÈ Ø ² Î ² ð ² ÎÜ º ðÆÜ, áñÇó`* | x | 100.0 | 100.0 | 0.0 |
| 4533 | - ² ÛÉ ÁÝÃ ³ óÇÏ ¹ñ ³ Ù ³ ßÝáñÑÝ»ñ, ³ Û¹ ÃíáõÙ` | 4639 | 100.0 | 100.0 | 0.0 |
| 4600 | *1.6 êàòÆ ² È ² Î ² Ü Üä ² êî Ü º ð º ì Î º Üê ² Âà Þ ² ÎÜ º ð, ³ Û¹ ÃíáõÙ`* | x | 10125.0 | 10125.0 | X |
| 4630 | *êàòÆ ² È ² Î ² Ü ú¶ÜàôÂÚ ² Ü ¸ ð ² Ø ² Î ² Ü ² ð î ² Ð ² Úî àôÂÚ ² Ø ´ Üä ² êî Ü º ð (´Úàôæ º Æò),* | x | 10125.0 | 10125.0 | X |
| 4631 | -Ðáõ Õ ³ ñÏ ³ íáñáõÃÛ ³ Ý Ýå ³ ëï Ý»ñ µÛáõç»Çó | 4726 | | | X |
| 4632 | - Î ñÃ ³ Ï ³ Ý, Ùß ³ Ïáõà ³ ÛÇÝ ¨ ëåáñï ³ ÛÇÝ Ýå ³ ëï Ý»ñ µÛáõç»Çó | 4727 | 700.0 | 700.0 | X |
| 4633 | - ´Ý ³ Ï ³ ñ ³ Ý ³ ÛÇÝ Ýå ³ ëï Ý»ñ µÛáõç»Çó | 4728 | | | X |
| 4634 | - ² ÛÉ Ýå ³ ëï Ý»ñ µÛáõç»Çó | 4729 | 9425.0 | 9425.0 | X |
| 4640 | *Î º Üê ² Âà Þ ² Î Ü º ð, áñÇó`* | x | | | X |
| 4641 | - Î »Ýë ³ Ãáß ³ ÏÝ»ñ | 4741 | | | X |
| 4700 | *1.7 ² ÚÈ Ì ² Êê º ð, ³ Û¹ ÃíáõÙ`* | x | | | |
| 4710 | *Ü ì Æð ² î ì àôÂÚàôÜÜ º ð àä Î ² è ² ì ² ð ² Î ² Ü (Ð ² è ² ð ² Î ² Î ² Ü) Î ² ½Ø ² Î º ðäàôÂÚàôÜÜ º ðÆÜ,* | x | | | X |
| 4712 | -Ü íÇñ ³ ï íáõÃÛáõÝÝ»ñ ³ ÛÉ ß ³ Ñáõ³ ãÑ» ï ³ å Ý¹áõ Ï ³ ½Ù ³ Ï»ñå áõÃÛáõÝÝ»ñÇÝ | 4819 | | | X |
| 4720 | *Ð ² ð Î º ð, ä ² ð î ² ¸ Æð ì Ö ² ð Ü º ð º ì î àôÚ Ä º ð, àðàÜø Î ² è ² ì ² ðØ ² Ü î ² ð ´ º ð Ø ² Î ² ð ¸ ² Î Ü º ðÆ Î àÔØÆò ÎÆð ² è ì àÔ Ø º Ü* | x | 110.0 | 110.0 | X |
| 4721 | - ² ßË ³ ï ³ í ³ ñÓÇ ýáÝ¹ | 4821 | | | X |
| 4722 | - ² ÛÉ Ñ ³ ñÏ»ñ | 4822 | | | X |
| 4723 | -ä ³ ñï ³ ¹Çñ íׯ ³ ñÝ»ñ | 4823 | 110.0 | 110.0 | X |
| 4770 | *ä ² Ðàôê î ² ÚÆÜ ØÆæàòÜ º ð, áñÇó`* | x | 0.0 | 0.0 | |
| 4771 | -ä ³ Ñáõëï ³ ÛÇÝ ÙÇçáóÝ»ñ, ³ Û¹ ÃíáõÙ` | 4891 | 0.0 | 0.0 | |
| 5000 | **´ . àâ üÆÜ ² Üê ² Î ² Ü ² Î îÆì Ü º ðÆ ¶Ì àì Ì ² Êê º ð, ³ Û¹ ÃíáõÙ`** | x | 14654.4 | X | 14654.4 |
| 5100 | 1.1. ÐÆØÜ ² Î ² Ü ØÆæàòÜ º ð, ³ Û¹ ÃíáõÙ` | x | 10874.4 | X | 10874.4 |
| 5110 | *Þ º Üø º ð º ì ÞÆÜàôÂÚàôÜÜ º ð, áñÇó`* | x | 10694.4 | | 10694.4 |
| 5111 | - Þ»Ýù»ñÇ ¨ ßÇÝáõÃÛáõÝÝ»ñÇ Ó»éù µ»ñáõÙ | 5111 | | X | |
| 5112 | - Þ»Ýù»ñÇ ¨ ßÇÝáõÃÛáõÝÝ»ñÇ Ï ³ éáõóáõÙ | 5112 | | X | |
| 5113 | - Þ»Ýù»ñÇ ¨ ßÇÝáõÃÛáõÝÝ»ñÇ Ï ³ åÇï ³ É í»ñ ³ Ýáñá·áõÙ | 5113 | 10694.4 | X | 10694.4 |
| 5120 | *Ø º ø º Ü ² Ü º ð º ì ê ² ðø ² ì àð àôØÜ º ð, áñÇó`* | x | 180.0 | | 180.0 |
| 5121 | - îñ ³ Ýëåáñï ³ ÛÇÝ ë ³ ñù ³ íáñáõÙÝ»ñ | 5121 | | X | |
| 5122 | - ì ³ ñã ³ Ï ³ Ý ë ³ ñù ³ íáñáõÙÝ»ñ | 5122 | 180.0 | X | 180.0 |
| 5123 | - ² ÛÉ Ù»ù»Ý ³ Ý»ñ ¨ ë ³ ñù ³ íáñáõÙÝ»ñ | 5129 | | X | |
| 5130 | *² ÚÈ ÐÆØÜ ² Î ² Ü ØÆæàòÜ º ð, áñÇó`* | x | 3750.0 | | 3750.0 |
| 5131 | - ² ×»óíáÕ ³ ÏïÇíÝ»ñ | 5131 | | X | |
| 5132 | - àã ÝÛáõà ³ Ï ³ Ý ÑÇÙÝ ³ Ï ³ Ý ÙÇçáóÝ»ñ | 5132 | | X | |
| 5133 | - ¶»á¹»½Ç ³ Ï ³ Ý ù ³ ñï »½³ ·ñ ³ Ï ³ Ý Í ³ Ëë»ñ | 5133 | 3450.0 | | 3450.0 |
| 5134 | - Ü ³ Ë ³ ·Í ³ Ñ» ï ³ ½á ï ³ Ï ³ Ý Í ³ Ëë»ñ | 5134 | 330.0 | | 330.0 |
| 5200 | *1.2 ä ² Þ ² ðÜ º ð, ³ Û¹ ÃíáõÙ`* | x | | X | |
| 6000 | **¶ . àâ üÆÜ ² Üê ² Î ² Ü ² Î îÆì Ü º ðÆ Æð ² òàôØÆò** | x | -5850.0 | X | -5850.0 |
| 6130 | *² ÚÈ ÐÆØÜ ² Î ² Ü ØÆæàòÜ º ðÆ Æð ² òàôØÆò Øàôîø º ð* | 8131 | -3690.0 | X | -3690.0 |
| 6400 | **â ² ð î ² ¸ ðì ² Ì ² Î îÆì Ü º ðÆ Æð ² òàôØÆò Øàôîø º ð, ³ Û¹ ÃíáõÙ`** | x | -1890.0 | X | -1890.0 |
| 6410 | *ÐàÔÆ Æð ² òàôØÆò Øàôîø º ð* | 8411 | -1890.0 | X | -1890.0 |

## Ð²ÎÌ²Ì 4

### Ð²Ø²ÚÜøÆ ´ÚàôæºÆ ØÆæàòÜºðÆ Î²ðºÌºðæÆ Ð²ÌºÈàôð¸À Ï²Ø ¸ºüÆòÆîÀ (ä²Î²êàôð¸À)

(Ñ³½³ñ ¹ñ³Ùáí)

| îáÕÇ NN | | ÀÝ¹³Ù»ÝÁ (ë.4+ë.5) | ³Û¹ ÃíáõÙ` | |
|---|---|---|---|---|
| | | | í³ñã³Ï³Ý Ù³ë | ýáÝ¹³ÛÇÝ Ù³ë |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 8000 | **ÀÜ¸²ØºÜÀ Ð²ÌºÈàôð¸À Î²Ø ¸ºüÆòÆîÀ (ä²Î²êàôð¸À)** | 6434.4 | 4618.4 | 1816.0 |

## Ð²ÎÌ²Ì 5

### Ð²Ø²ÚÜøÆ ´ÚàôæºÆ Ð²ÌºÈàôð¸Æ ú¶î²¶àðÌØ²Ü àôÔÔàôÃÚàôÜÜºðÀ Î²Ø ¸ºüÆòÆîÆ (ä²Î²êàôð¸Æ) üÆÜ²Üê²ÌàðØ²Ü ²Ô´ÚàôðÜºðÀ

| îáÕÇ NN | ´Ûáõç» ï³ñ³Í³ßñç³ÝÁ ÙÇç»ñ³Ïáí ï³ï³ëË³Ý ïÇåÁ | | ÀÝ¹³Ù»ÝÁ (ë.5+ë.6) | ³Û¹ ÃíáõÙ` | |
|---|---|---|---|---|---|
| | ³Ýí³ÝáõÙ»ñÁ | NN | | í³ñã³Ï³Ý Ù³ë | ýáÝ¹³ÛÇÝ Ù³ë |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 8010 | **ÀÜ¸²ØºÜÀ, ³Û¹ ÃíáõÙ`** | | **1816.0** | **-4618.4** | **6434.4** |
| 8100 | **². Ü»ðøÆÜ ²Ô´ÚàôðÜºð, ³Û¹ ÃíáõÙ`** | | **1816.0** | **-4618.4** | **6434.4** |
| 8160 | ***2. üÆÜ²Üê²Î²Ü ²ÎîÆìÜºð, ³Û¹ ÃíáõÙ`*** | | **1816.0** | **-4618.4** | **6434.4** |
| **8190** | **2.3. Ð³Ù³ÛÝùÇ µÛáõç»Ç ÙÇçáóÝ»ñÇ ï³ñ»ëÏ½µÇ ³½³ï ÙÝ³óáñ¹Á, ³Û¹ ÃíáõÙ` (ïáÕ 8191+ïáÕ 8194-ïáÕ8193)** | | **1816.0** | **-4618.4** | **6434.4** |
| 8193 | *- »ÝÃ³Ï³ ¿ áõÕÕÙ³Ý Ñ³Ù³ÛÝùÇ µÛáõç»Ç ýáÝ¹³ÛÇÝ Ù³ë* | | 4618.4 | **-4618.4** | X |
| 8194 | *2.3.2. Ð³Ù³ÛÝùÇ µÛáõç»Ç ýáÝ¹³ÛÇÝ Ù³ëÇ ÙÇçáóÝ»ñÇ ï³ñ»ëÏ½µÇ ÙÝ³óáñ¹, áñÇó`* | | 1816.0 | X | 1816.0 |
| 8196 | *- í³ñã³Ï³Ý Ù³ëÇ ÙÇçáóÝ»ñÇ ï³ñ»ëÏ½µÇ ³½³ï ÙÝ³óáñ¹Çó ýáÝ¹³ÛÇÝ Ù³ë Ùáõïù³·ñÙ³Ý »ÝÃ³Ï³ ·áõÙ³ñÁ* | | -4618.4 | X | -4618.4 |